Այնուհետև տրված է բնութագրականը. «Մատյանս է՝ «Հայոց պատմություն հայկազյանց հաբրատության սկզբից մինչև Արշակունյաց հաբրատության վերջը»։ «Ամբողջը,— ավելացնում է աշխատասիրողը,— բաժանված է 45 գլուխների։ Հանելի լեզվով գրված նախակրթարանի դասագիրք մըն է», ապա բերում է ենթավերնագրային ավյալները։ 1572 թվահամարի տակ նույնպիսի նկարագրություն տրված է նաև Բաֆֆու «Հայոց պատմության» Բ հատորի ձեռագրի վերաբերյալ։

Բառարաններ վերնագրի տակ գրանցված խաբրագրերը ցույց են տալիս, որ միաբանության մատենադարանում հանգրվանում են 60 անուն ամենատարբեր բնույթի՝ ամբողջական ու թերի բառարաններ, ինչպես պարզվում է զուգակցվող բնութագրականներից, դրանց մի մասը կարող է ունենալ միայն պատմական արժեք, սակայն կան այնպիսիները, որոնք արժեքավոր են նաև այսօրվա չափանիշներով։

Եվ այսպես տասնյակ ու տասնյակ վերնագրեր ցանկում և բացում ձեռագրեր հատորի մեջ։

Եթե անտալով քննադատության ձայնին «զանց ընելիս» դիվանական բնույթ ունեցող ձեռագրերը, ապա Կոմիտասի, Բաֆֆու և բացում համանրման արժեք ունեցող ձեռագրեր պետք է մնային մատենադարանի գրադարակների անհայտության մեջ, մինչդեռ աշխատասիրողը դիտուկ կերպով նկատում է, որ «այս գանձերը չեն հավաքվիր անկյուն մը դիզվելու կամ գանձարաններու մեջ արգելափակելու համար»։

Ձեռագրացուցակի որակն ու մակարդակը և ծավալը իրավունք են տալիս Մխիթարյան Մեծերի՝ Տաշյանի, Աշիշանի ու Ավգերյանի, Այտընյանի, Ինճիճյանի ու Ակինյանի, Գովրիկյանի, Գալեմքյարյանի ու Ոսկյանի կողքին թվարկելու նաև Օգոստինոս Սեբուլյանի անունը։

Խ. Ե. ԱԱՄՎԵԼՅԱՆ

SABINE STEPHAN, Karapet Episkopos Ter-Mkrtschjan (1866—1915) Materialien zu einem Kapitel armenisch-deutscher wissenschaftlicher Zusammenarbeit (Unter Mitarbeit von Loretta Chr. Ter-Mkrtschjan, redigiert und herausgegeben von Hermann Goltz, Halle (Saale). Marthin Luther Universitat Halle-Wittenberg. Wissenschaftliche Beitrage 1983, 37 (T52)—XI+154 S.

ՍԱԲԻՆԵ ՇՏԵՖԱՆ, Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյան (1866—1915)։ Հայ-գերմանական գիտական համատեղ աշխատանքների նյութեր (աշխատակցությամբ Լորետա Տեր-Մկրտչյանի, խմբագիր և հրատարակիչ Հերման Գոլցի, Հալլե, *Մարտին Լութերի համալսարան, 1983։*

XIX դարի 80-ական թթ. սկսած Գեորգյան ճեմարանն ավարտած ու հոգևոր կոչում ստացած սաներից շատերը (Արշակ Տեր-Միքելյան, Կարապետ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյան, Երվանդ Տեր-Մինասյան և ուրիշներ ուղարկվում էին ուսանելու Գերմանիայի համալսարանական կենտրոններում։ Գերմանիայում կրթություն ստացած բանասերները էջմիածին բերեցին դասական բանասիրությամբ զբաղվելու ճաշակ և անհրաժեշտ հմտություն, փաստորեն հայագիտական մի շարք դպրոցների կողքին ձևավորվեց էջմիածնական դպրոցը, որ XX դարի սկզբին արդեն ուներ իր ընդգծված ուղղությունը։

Բանասիրական այդ դպրոցի նշանավոր գործիչներից էր Կարապետ Տեր-Մկրտչյանը, որի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրություն է հրապարակել Վիտենբերգի (ԳԴՀ) Մարտին Լութերի համալսարանը։ Գիրքը լույս է ընծայել Զաբինե Շտեֆանը, Լ. Տեր-Մկրտչյանի աշխատակցությամբ ու հրատարակիչ-խմբագիր Հերման Գոլցի ջանքերով։ Գիրքը սկսվում է վերջինիս առաջաբանով (էջ V—VII), որին հաջորդում է Զաբինե Շտեֆանի ուսումնասիրությունը՝ նվիրված Կարապետ Տեր-Մկրտչյանի կյանքին ու գործունեությանը (էջ 1—67)։ Հավելվածում զետեղված են Կարապետ Եպիսկոպոսի նամակները Հալլեի համալսարանի իր ուսուցիչ Ֆ. Լոֆֆին (էջ 68—78), ապա հաջորդում է Կարապետ Տեր-Մկրտչյանի աշխատությունների մատենագիտությունը (էջ 79—105), կազմված Լ. Տեր-Մկրտչյանի ձեռքով։

Գրախոսվող աշխատության ներածությունում տրվում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ-գերմանական գիտամշակութային կապերի համառոտ բնութագիրը։ Այդ ժամանակաշրջանը քիչ է ուսումնասիրված։ Այս հանգամանքը իր առաջաբանում շեշտում է նաև Հերման Գոլցը, նշելով, որ գերմանական համալսարաններում (Լայպցիգ, Հալլե, Բեռլին, Տյուբինգեն) կրթություն ստացած նշանավոր հայազգի գիտնականների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը նպաստում է այդ խնդրի պարզաբան-

մանը։ Խոսքը վերաբերում է առաջին հերթին այն գիտնականներին, որոնք Գերմանիայում ձեռք բերելով դիտական ուսումնասիրությունների անհրաժեշտ մեթոդ, այն օգտագործում էին հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ուսումնասիրության բնագավառում՝ ծառայեցնելով այդ մշակույթի շահերին ու այն կրող ժողովրդի ձգտումներին։ Կարելի է միայն ավելացնել, որ նման ուսումնասիրությունների ստեղծումը նաև հայագիտության խնդիրներից մեկն է։

Զաբինե Շտեֆանը գրում է. «Տարբեր նկատառումներով հետաքրքիր է քննության առնել էրուդիցիայով հարուստ այն անձնավորության կյանքի մանրամասները, որը բարձր է գնահատվել Ադոլֆ Հառնակի և Ֆրիդրիխ Լոոֆսի կողմից։ Մեր առաջ հառնում է ոչ թե իր մասնագիտական համակարգի մեջ ներփակված գիտնականի դիմանկարը, այլ մի մարդու, որն իր ժողովրդի մի հատվածի գոյատևման համար մղվող պայքարից զատ հետամուտ էր նաև գիտական գործունեության՝ հասնելով ավելի մեծ հաջողությունների, քան մասնագետ գիտնականը»։

Իր ուսումնասիրությունը գրելիս Զաբինե Շտեֆանը հետևել է Կ. Տեր-Մկրտչյանի հրապարակած գրքի (Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, «Կյանքն ու գործունեությունը կաթողիկոսական ընտրությունների առթիվ», Մոսկվա, 1911) բովանդակությանը, ավելի հանգամանորեն անդրադառնալով Կարապետ Եպիսկոպոսի Գերմանիայում անցկացրած տարիներին (1889--1893)։

Առաջին գլխում քննության են առնվել Կ. Տեր-Մկրտչյանի կյանքի ու գործունեության տարբեր փուլերը՝ մանկության և պատանեկության տարիները, կրթությունը էջմիածնի ճեմարանում, ուսումնառության տարիները Գերմանիայում, ուղեղնացություններ Ֆրանսիայում, Ավստրիայում, Անգլիայում, Տեր-Մկրտչյանը որպես էջմիածնի ճեմարանի ուսուցիչ, ճեմարանի տեսուչ, եպիսկոպոսական գործունեությունը Երևանում, Կ. Տեր-Մկրտչյանը Թավրիզի եպիսկոպոսի պաշտոնում, հայկական եկեղեցու ռեֆորմը։

Աշխատության հաջորդ գլուխը կրում է «Կ. Տեր-Մկրտչյանի գիտական և հրապարակախոսական աշխատություններ» խորագիրը, ուր տրվում է նրա գիտական գործունեության ամփոփ նկարագրությունը, նրա աշխատանքների, հրապարակումների համառոտ բնութագրումը։

Գ. Տեր-Մկրտչյանի գործունեությունը բազմակողմանի բովանդակություն ունի (ուսումնադաստիարակչական, վարչական, կրոնական, հրապարակախոսական), որոնց մեջ Զաբինե Շտեֆանը առանձնացնում է գիտնականը։ Դեռևս ուսումնառության տարիներին Գերմանիայում Կ. Տեր-Մկրտչյանի գրած «Պողիկեանց մասին» աշխատանքը անմիջապես գրավել է գիտական աշխարհի ուշադրությունը՝ արժանանալով պրոֆ. Գելցերի գնահատությանը։ Նրա առաջին գիտական խոշոր գործը «Պավլիկյանները բյուզանդական կայսրությունում» աշխատությունն էր, որով հեղինակը նոր լույս է սփռում համաշխարհային եկեղեցական պատմության մեջ մեծ դեր խաղացած աղանդի պատմության վրա՝ հիմք ծառայելով այդ աղանդի մասին գիտնականների (Ֆրիդրիխ, Կոնիբեր) նորանոր ուսումնասիրությունների համար։ Հառնակի գնահատմամբ «հայոց եկեղեցու մեջ առաջացած հակաեկեղեցական ուղղությունների պատմության համար այս աշխատությունը մի հիմնաքար է»։ Նրա շարունակությունն է նաև 1895 թ. Kirchengeschichte ամսագրում հրատարակած՝ «Թոնդրակեցիների մասին մեր օրերում» հոդվածը։ Կարապետ Տեր-Մկրտչյանի գիտական գործունեության ամենակարևոր փուլը սկսվում է 1907 թ., երբ նա Երևանի Կաթողիկե եկեղեցում գտնում է գերմաներեն թարգմանությանը զուգադիր Հառնակի «Texte und Untersuchungen» շարքում հրատարակում է Իրենիոսի «Յոյցք առաքելականը»։ Սույն երկը II դարի դավանաբանության կարևորագույն աղբյուրներից է։ Նրա բնագիրը կորած էր, և միայն վերնագիրն էր հիշատակվում Եվսեբիոս Կեսարացու մոտ։ Նույն ձեռագրի մեջ էր նաև Իրենիոսի «Ընդդէմ հերձուածոց» աշխատության 4-րդ և 5-րդ գլուխների թարգմանությունը։ Կարևոր գյուտ էր նաև Մայր Աթոռի մատենադարանում 1897 թ. նրա հայտնաբերած Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Կուսի «Հակաճառությունը», որի բնագիրը նույնպես չկար և հայ թարգմանությամբ է միայն հայտնի դառնում գիտական աշխարհին։ Մյուս կարևոր աշխատությունը «Կնիք հավատոն» էր՝ եկեղեցական հայրերի գրվածքներից քաղված վկայությունների ժողովածուն, ըստ Կ. Տեր-Մկրտչյանի բնորոշման՝ մի «կոթող հայոց եկեղեցու ընդունած այն դավանական դրության, որ իր կատարյալ զարգացման աստիճանին է հասել է դարի սկզբում», կազմված Մայրագոմեցու ձեռքով. Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ։ Այս ժողովածուն ևս մատենագիտական մեծ արժեք ունի. այնտեղ մեջ են բերված ընդհանուր և հայ եկեղեցու հայրերից վկայություններ, ընդ որում նրանցից մի քանիսի ամբողջական թարգմանությունները կամ բնագրերը դեռ անհայտ են։ Հիշյալ աշխատության հետ կապ ունի նրա «Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի» աշխատությունը՝ հրատարակված 1913-ին «Շողակաթ» ժողովածուում։ Կ. Տեր-Մկրտչյանի վերջին աշխատությունն էր «Դուիյանք և Մելիք Շահնազարյանք», ուր մանրակրկիտ ուսումնասիրությամբ ցույց է տրվում Մելիք Շահնազարյանն-

րի ծագումը XIII դարում առաջ եկած Դուիյան իշխանական տոհմից։

Վերջին գլխում, ինչպես ասվեց, ներկայացվում է Կ. Տեր-Մկրտչյանի աշխատությունների մատենագիտությունը։ Հեղինակն այն բաժանում է 5 խմբի.

1. Ուսումնասիրություններ, թարգմանություններ, հոդվածներ, որոնք լույս են տեսել էջմիածնում, Թիֆլիսում, Բաքվում, Երուսաղեմում։

2. Միայն Գերմանիայում հրապարակված գործեր (նաև հրապարակումներ, որոնք արվել են Կարապետ Տեր-Մկրտչյանի կողմից հայտնաբերված ձեռագրերի հիման վրա), թարգմանություններ։

3. Հոդվածներ, ուսումնասիրություններ, քարոզներ, գրախոսություններ, բանավեճեր, որոնք լույս են տեսել «Արարատ» ամսագրում։

4. Այլ ամսագրերում լույս տեսած հոդվածներ գերմաներեն և ռուսերեն լեզուներով։

5. Մատենագիտական ցուցումներ Կ. Տեր-Մկրտչյանի հրապարակած և չհրատարակած աշխատանքների վերաբերյալ, որը կազմել են Ե. Տեր-Մինասյանը, Է. Շտիրը և Սիմոնյանը։

6. Այլ նյութեր Կ. Տեր-Մկրտչյանի վերաբերյալ. հայերեն, գերմաներեն լեզվով գրախոսականներ և հոդվածներ նրա աշխատությունների վերաբերյալ։ Այստեղ տեղ չեն գտել Կ. Տեր-Մկրտչյանի՝ հայ մամուլում լույս տեսած բոլոր հոդվածները, բաց են թողնվել նաև նրա գրչին պատկանող շատ խմբագրական հոդվածներ, որոնք լույս են տեսել «Արարատի» համարներում։ Սպրդել են մի շարք անճշտություններ վերնագրերի թարգմանության մեջ, հավանաբար պայմանավորված, ինչպես վկայում է հեղինակը, մատենագիտության մեջ ընդգրկված նյութերի տեքստի չիմացությամբ և դրանք ձեռքի տակ չունենալու հանգամանքով։

Զաբինե Շտեֆանի գիրքը ներկայացնում է նաև նոր նյութեր, որոնք հավաքել և մասամբ «Christliche Welt» և «Orient» հանդեսներում հրատարակել է հայագետի մտերիմ բարեկամ, ժամանակի գերմանա-հայկական ընկերության քարտուղար է. Շտիրը։ Որպես օժանդակ աղբյուր հիմք է ծառայել նաև վերջինիս չհրատարակած ինքնակենսագրությունը։

Գրքի 68—76-րդ էջերում իբրև հավելված տպագրված են Կ. Տեր-Մկրտչյանի անտիպ նամակները՝ հասցեագրված եկեղեցադավանական խնդիրների հետազոտող Ֆ. Լոֆսին՝ նպատակ ունենալով ավելի հետևողականորեն ներկայացնելու Հալլեի համալսարանի հետ Կ. Տեր-Մկրտչյանի ունեցած կապը։ Նամակները ներկայացնում են նաև հայագիտական հետաքրքրություն։

Որպես կենսագրությունն ամբողջացնող լրացուցիչ աղբյուր օգտագործվել է նաև Հալլեի Յոհաննես Լեպսիուսի արխիվի ամսագրերի և ձեռագրական նյութերի հարուստ հավաքածուն։

Աշխատությունն ունի անհրաժեշտ գիտական ապարատ՝ անձնանունների, տեղանունների և գրականության ցանկեր, ընդարձակ ծանոթագրություններ։ Հարուստ է ցուցադրական նյութը՝ բազմաթիվ լուսանկարներ, քարտեզ և պատմական տեղանունների աղյուսակ։

Զ. Շտեֆանի գրախոսվող աշխատության շարադրանքի մեջ հնարավոր չի եղել ընդգրկել մընացած կարևոր աղբյուրները՝ դրանց թվում նաև Կ. Տեր-Մկրտչյանի՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող արխիվը և այլ նյութեր։ Հետևաբար, այն չի կարող համարվել Կ. Տեր-Մկրտչյանի կյանքն ու գործունեությունը ամփոփող ավարտուն աշխատություն։

Հրատարակիչը հույս է հայտնում, որ մոտակա ժամանակում կկարողանա ներկայացնել գերմանական իրականության հետ կապված հայ գիտնականների, ինչպես նաև Կ. Տեր-Մկրտչյանի կյանքին ու գործունեությանը նվիրված այլ աշխատություններ։

Մ. Հ. ՓԵՏԱԿՉՅԱՆ

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. **М. Г. Нерсисяна**, сост. М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. 2-е доп. изд. Ереван, «Айастан», 1983, XVI+685 с.

Рецензируемый сборник, вышедший вторым, дополненным изданием, включает в себя важнейшие материалы о геноциде армян в Османской империи в конце прошлого века и в годы первой мировой войны и языком неоспоримых фактов и документов доказывает, что правители военно-феодальной Турции совершили величайшее преступление, уничтожив около полутора миллионов западных армян. Материалы сборника вскрывают всю фальшь турецкой пропаганды, которая уже в течение нескольких десятилетий извращает исторические факты и покрывает преступные действия организаторов геноцида. Приведены свидетельства такого разгула законов джунглей и актов разбоя в